



«ԱՐՅԱՆ»
ԳԻՏԱՆՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԱՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՎԱՐԳ
ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱՆԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԿ



ՄԵԴԻԱ
ԱՍՈՑԻԱՅԻՆ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՆ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

№ 4(7), 2020

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 4(7), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The «Scientific Artsakh» journal is posted on www.elibrary.ru website.

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных

Высшим аттестационным комитетом Республики Армения (BAK RA).

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

**Ընթացիկ համարը նվիրվում է 2020թ. սեպտեմբերի 27-ին
աղբբեջանաթուրքական վարձկան հրոսակների սանձագերծած
պատերազմում Արցախի Սուրբ հողի քաջարի պաշտպաններին:**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Նաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)

Գևորգ ԴԱԻԿԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՐԻՎԱԶՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալֆրեդ դե ՉԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)

Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)

Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Միսսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԽՏԵՐՅԱՆՆԻՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մուշեղ ՀՈՎՍԵԹՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 4(7), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 280 էջ:

**«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 4-րդ (7-րդ) համարի տպագրության
աջակցել է «Մեդիա ասոցիացիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:**

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

*The current issue is dedicated to the brave defenders
of the Holy land of Artsakh in the war unleashed by
azerbaijani-turkish mercenaries on September 27, 2020.*

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member,
Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Lena ASRYAN, Doctor of History (Tarragona, Spain)
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (Lviv, Ukraine)
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor (Minsk, Belarus)
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (Geneva, Switzerland)
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 4(7), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 280 pages.

The publication of the 4th (7th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «Media Association» LLC.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

*Текущий номер посвящен отважным защитникам
Святой земли Арцаха в войне, развязанной азербайджано-
турецкими наемниками 27 сентября 2020 года.*

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 4(7), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 280 страниц.

Публикация 4(7) номера 2020 года журнала «Научный Арцах» была осуществлена при содействии ООО «Медиа ассоциация».

Անի Սահակյան. Վիրտուալ կազմակերպությունների առանձնահատկությունները..... 155
Ani Sahakyan. Features of Virtual Organizations
Ани Саакян. Особенности виртуальных организаций

Վահագն Տեփոյան. Տնտեսության ամփոփ ցուցանիշների վրա ֆինանսական համակարգի ցուցիչների ազդեցությունների գործոնային վերլուծություններ..... 164
Vahagn Teroyan. The Factor Analysis of the Influence of the Financial System Indicators on the Summarized Economic Indicators
Ваагн Тепоян. Факторный анализ влияния показателей финансовой системы на сводные экономические показатели

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ, PEDAGOGY, ПЕДАГОГИКА

Մերի Հովհաննիսյան. Հեռավար ուսուցման առանձնահատկությունները..... 178
Meri Hovhannisyan. Peculiarities of Distance Learning
Мери Ованнисян. Особенности дистанционного обучения

ԼԵԾԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА

Լուսինե Սողոմոնյան. Գերմաներեն երկխոսության հոգելեզվարանական բնութագրերը..... 188
Lusine Soghomonyan. The Psycholinguistic Characteristics of German Dialogues
Лусине Согомонян. Психолингвистические характеристики диалогов в немецком языке

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Անուշ Թասալյան. Եղիշե Չարենցը և «Ստանդարտ» հանդեսի միակ համարը..... 199
Anush Tasalyan. Yeghishe Charents and the Only Issue of «Standard» Magazine
Ануш Тасалян. Егише Чаренц и единственный номер журнала «Стандарт»

Արամ Խաչատրյան. Փնացքի ու երկաթուղու ֆունկցիոնալ նշանակությունը Հրաչյա Սարիբեկյանի «Ապուլների ուղևորությունը» վեպում..... 206
Aram Khachatryan. Functional Significance of the Train and Railway in the Novel «Journey of Idiots» by Hrachya Saribekyan
Арам Хачатрян. Функциональное значение поезда и железной дороги в романе «Путешествие идиотов» Грачьи Сарибекяна

Շուշան Խաչատրյան. Մուխտար Աուեզովը և դազախական դրամատուրգիան 1920-1940-ական թթ.-ին..... 213
Shushan Khachatryan. Mukhtar Aueзов and Kazakh Dramaturgy in the 1920-1940s
Шушан Хачатрян. Мухтар Ауэзов и казахская драматургия в 1920-40-ых годах

Սիրանուշ Փարսադանյան. Պատմական դեպքերի գեղարվեստական մարմնավորումը Հովհ. Սիրոզյան Վանանդեցու «Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի» պոեմում..... 223
Siranush Parsadanyan. Fictional Illustration of Historical Events in «Hayk, Aram and Ara's Scene» Poem by Hovhannes Mirzayan Vanandetsi
Сирануш Парсаданян. Художественное олицетворение исторических событий в поэме «Знаменитые деяния Айка, Арама и Ара» Ованнеса Мирзаяна Ванандеци



ՀԵՌԱԿԱՐ ՌԻՍՈՒՑԱՆ ԱՌԱՆՁԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՀՏԴ 378.018

ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի դասախոս, ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու,

Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող, գիտքարտուղար
mary.hovhannisyan@gmail.com

Հետազոտության նպատակներն են հստակորեն սահմանափակել հաճախ սխալաբար նույնացվող «առցանց» և «հեռավար ուսուցում» հասկացությունները, վերլուծել հեռավար ուսուցման առանձնահատկությունները: Մեր խնդիրն է բացահայտել հեռավար ուսուցման էությունը, առավելություններն ու թերությունները, հեռավար ուսուցման ժամանակ դրսևորվող մանկավարժական խնդիրները և դրանց լուծման ուղիները: Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես համագիտական, այնպես էլ հատուկ (համեմատական, տրամաբանական և այլն) մեթոդներ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ հեռավար ուսուցման հիմքում նամակագրական, առցանց ուսուցումն է: Համակարգչային որևէ տեխնոլոգիայով իրականացվող առցանց ուսուցումը հեռավար ուսուցումից տարբերվում է իր ընդգրկվածությամբ: Հեռավար ուսուցման ժամանակացույցը, գնահատման համակարգը հստակորեն մշակվում են՝ ներառելով կրթական ամբողջ գործընթացը: Ի տարբերություն դասավանդման ավանդական մեթոդների՝ հեռավար ուսուցումը ներառում է տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաներ, նպաստում է ուսուցման անընդհատականության ապահովմանը, ուսուցման կապակերպման հարմարավետությանը, սովորողների ինքնակրթության զարգացմանը և այլն: Հեռավար ուսուցման թերությունները պայմանավորված են սովորող-մանկավարժ ոչ անմիջական շփմամբ, սովորողի և մանկավարժի՝ հեռավար ուսուցման միջոցների կիրառման տեխնիկական պատրաստվածության բացակայությամբ, համակարգչային սարքավորումների կամ համացանցի անհասանելիությամբ, հեռավար ուսուցման մեթոդների ընտրությամբ և այլն: Հեռավար ուսուցման արդյունավետությանը կարող են նպաստել սովորողակենտրոն դասավանդումը, համագործակցային ուսուցումը, վերահսկողության ճիշտ գործիքի ընտրությունը, համացանցային ուսումնառության ակտիվության պահանջի առաջադրումը և այլն:

Հիմնաբառեր՝ հեռավար ուսուցում, նամակագրական կրթություն, առցանց ուսուցում, ավանդական ուսուցում, հեռավար ուսուցման տեխնոլոգիաներ, ուսուցման խառը մեթոդ, սովորողակենտրոն դասավանդում, համագործակցային ուսուցում, հետադարձ կապ:

* Հոդվածը ներկայացվել է 12.10.2020թ., գրախոսվել՝ 20.10.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

Ներածություն

Արդեն կես տարուց ավելի հայաստանյան, նաև տարբեր ժամանակահատվածներում աշխարհի բազմաթիվ ուսումնական հաստատություններ, կորոնավիրուսի (Covid-19) տարածման արտակարգ դրությամբ պայմանավորված, անցում են կատարել հեռավար ուսուցման: Համաձայն «Արտակարգ դրություն հաստատուտեություն մասին» ՀՀ Կառավարության որոշումով՝ դադարեցվել է ուսումնական գործընթացը՝ բացառությամբ հեռավար ուսուցման⁴⁰³: Կորոնավիրուսի համաճարակը աշխարհին ստիպում է նորովի դիտարկել հեռավար կրթության հեռանկարները: Հեռավար ուսուցումը հաստատորեն արմատավորվում է կրթական միջավայրում՝ մրցակցային դիրքեր գրավելով ավանդական դասավանդման մեթոդների նկատմամբ: Եվ պատճառով միայն այն չէ, որ ուսուցման այս ձևն ավանդականի համեմատությամբ.

- ✓ առավել քիչ ծախսատար է,
- ✓ սովորողների լայն ընդգրկում ունի,
- ✓ ներառում է ժամանակակից տեղեկատվական համակարգեր, որոնք սովորողին նաև արագ տեղեկատվություն ստանալու հնարավորություն են տալիս,
- ✓ ունի կազմակերպման հարմարավետություն,
- ✓ ապահովում է դրական հետադարձ կապ և խթանում ուսուցումը,
- ✓ գրավիչ է ժամանակի կառավարման առումով. սովորողն ինքն է ընտրում իր համար ուսուցման ամենահարմար ժամանակը:

Այսօր կրթական ծառայությունների շահառուները, լինեն ուսանողներ, դասախոսներ, թե գործատուներ, ձգտում են կրթական ոլորտում տեսնել դինամիկ զարգացումներ: Հեռավար ուսուցումը բազմաշերտ է դարձնում սովորողների հմտությունների ու կարողությունների շրջանակը: Միայն դասախոսարանային պարամետրերով հնարավոր չէ պատրաստել մրցունակ շրջանավարտներ: Կրթությունը պահանջում է բազմակողմանի տեղեկացվածության ապահովում, համագործակցային ուսուցում, խմբային լայնածավալ քննարկումներ, բանավեճեր, գիտելիքների փոխանակում, որոնք առավելագույնս դրսևորվում ու ապահովվում են հեռավար ուսուցման պարագայում:

Հեռավար ուսուցման ծագումը

Հեռավար ուսուցման ակունքները գալիս են դեռևս 1700-ական թվականներից: Այդ ժամանակից սկսած՝ հեռավար ուսուցումն իրականացվել է մեթոդիկայի միջոցով, որը կոչվում է նամակագրական կրթություն (Correspondence education): Կրթության այս ձևը տարածվեց առանց սահմանների և բազմաթիվ երկրներում: Գործընթացը շատ պարզ էր. սովորողները ստանում էին հրահանգներ էլփոստով և պատասխանում ուսուցչի առաջադրած հարցերին՝ կատարելով և ուղարկելով նրա հանձնարարությունները: Գործընթացը երկկողմանի հաղորդակցության ապահովման տեսանկյունից շատ դանդաղ էր և կարող էր նույնիսկ մի քանի շաբաթ տևել: Չնայած նշված թերություններին՝ նամակագրական դասընթացների թիվը մեծացավ՝ հիմնականում հիմնվելով փոստային ծառայությունների զարգացման վրա: Դա հնարավորություն տվեց տարբեր տեղերում գտնվող մանկավարժներին ու սովորողներին հաղորդակցվելու⁴⁰⁴: Այլ տեսակետի համաձայն՝ հեռավար ուսուցման սկիզբը 1840 թվականն է, երբ անգլիացի ուսուցիչ Իսահակ Պիտմանը փոստով անցկացնում էր

⁴⁰³Տե՛ս «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ Կառավարության N 298-Ն որոշում, 16 մարտի, 2020 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=140212> (12.07.2020):

⁴⁰⁴ Տե՛ս Fritsch H., Distance Education // International Encyclopedia of the Social & Behavioral Sciences, Amsterdam, New York, 2001, pp. 3781-3784.

դասընթացներ⁴⁰⁵: Յետագայում՝ 1858 թ.-ին, Լոնդոնի համալսարանը դարձավ առաջին ուսումնական հաստատությունը, որը կրթական համակարգ ներմուծեց հեռավար ուսուցման բաղադրիչներ⁴⁰⁶: 30 տարի հետո Փենսիլվանիայում հիմնադրված խոշոր մի դպրոց ներգաղթյալ հանքագործների համար կազմակերպեց հեռավար դասընթացներ: 1906 թ.-ին հեռավար ուսուցում ստացողների թիվը հասավ մեկ միլիոնի: Յետագայում տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացը նպաստեց հեռավար ուսուցման զարգացմանը: Հեռուստատեսությունն ու ռադիոն դարձան առցանց հարթակներ, ուսումնական գործիքներ՝ հեռավար ուսուցման իրականացման համար: 1962 թ.-ին «Լյու Յորք Թայմսը» հոդվածներից մեկում շնորհավորել է տնային տնտեսուհուն՝ այդ հեռուստատեսային դասընթացներից բակալավրի աստիճան ստանալու համար՝ առանց տնից դուրս գալու:

Մասնագետների մեծ մասի կարծիքով հեռավար ուսուցման զարգացման հիմնական փուլը սկսվեց 1969 թ.-ին աշխարհում առաջին հեռավար ուսուցման համալսարանի՝ Մեծ Բրիտանիայի բաց համալսարանի հիմնադրմամբ: Այն ազդարարեց բաց կրթության դարաշրջանի սկիզբը. տարբեր երկրներում մի շարք բաց համալսարաններ հիմնադրվեցին՝ մեծ թափ հաղորդելով հեռավար ուսուցման տեսական ու գործնական հիմքերի զարգացմանը⁴⁰⁷: Համալսարանի անվանումը բացատրվում էր ուսումնական գործընթացի մատչելիությամբ, ոչ բարձր վարձավճարներով և լսարանային պարապմունքներին ոչ հաճախ այցելելու հնարավորությամբ: 1990-ական թվականներից հեռախոսների ու համացանցի զարգացումը հեռավար ուսուցումը մտցրեց զարգացման նոր փուլ՝ դրան վերագրելով երկու կարևոր գործառույթ՝ ուսանելու կամ ուսումնական փորձ ձեռք բերելու և սոցիալական կապի արժեքավոր զգացողության:

Առցանց ու հեռավար ուսուցման տարբերակումը

Ներկայումս առցանց ուսուցումը հաճախ շփոթում են հեռավար ուսուցման հետ: Առցանց դասընթացը համակարգչային որևէ տեխնոլոգիայի ներդրմամբ իրականացվող ուսուցումն է: Մանկավարժը, ավանդական կրթական տեխնոլոգիաները վերափոխելով, փոխադրում է դրանք առցանց հարթակ՝ վիրտուալ աշխարհ: 45-60-րոպեանոց «ավանդական» դասն առցանց անցկացնելը հեռավար ուսուցում չէ. դասը տեսաձայնագրելն ու սոցիալական ցանցերում կամ հատուկ հարթակներում տեղադրելն ընդլայնում է հասանելիությունը, կարող է անգամ օգտակար լինել սովորողներին և այլ անձանց, բայց բավարար չէ՝ հեռավար համարվելու համար:

«Հեռավար ուսուցում» ավելի լայն հասկացություն է. վերաբերում է կրթական ամբողջ գործընթացին՝ հստակ մշակված ժամանակացույցով, հարմարեցված առաջադրանքներով, առցանց գնահատման համակարգով, ամենակարևորը՝ բոլոր դասընթացների համար պատրաստված անձնակազմով: Խմբային անվճար տեսազանգերի և առցանց հարթակների ժամանակավոր կիրառությունը հեռավոր ուսուցում կամ կրթություն չէ: Հեռավար ուսուցումն իրագործելի է միայն այն դեպքում, երբ տվյալ ուսումնական հաստատությունն իր կադրերով և նրանց մշակած

⁴⁰⁵ Տե՛ս **Reed Th. A.**, A Biography of Isaac Pitman, Published by Forgotten Books, London, 2013, pp. 28, 32-33:

⁴⁰⁶ Տե՛ս **Lauren G.**, From Correspondence Courses To MOOCs: The Highlights Of Distance Learning Over The Ages. Forbes. Forbes Magazine, 12 Feb., 2014, <https://www.forbes.com/sites/laurengensler/2014/02/12/from-correspondence-classes-to-moocs-the-highlights-of-distance-learning-over-the-ages/#3815cb5a7690> (22.07.2020):

⁴⁰⁷ Տե՛ս Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու, ՀՀ կառավարման ակադեմիա և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, Երևան, 2017, էջ 7:

ուսումնական ծրագրերի պատրաստի փաթեթով հասել է որոշակի մակարդակի և կարող է ուսումնական գործընթացն ամբողջությամբ տեղափոխել Նաև առցանց դաշտ, ինչը տեխնոլոգիաների ժամանակակից աշխարհում բացարձակապես խնդիր չէ: Տեսազանգերը, տեսահանդիպումները և առցանց ուսուցման հարթակները մշտապես կարելի է կիրառել և թե ոչ միայն արտակարգ դրության կամ մեկուսացման պայմաններում: Այս ամենը, այդ թվում՝ դասը իրական դասարանից կամ լսարանից համացանց տեղափոխելը հաղորդակցական գործիքի, օրինակ՝ Zoom-ի միջոցով, տեխնոլոգիական լուծում է, որն իրականացվում է կրթական գործընթացը համակարգելու համար: Նաև նշենք, որ մեր օրերում լայն տարածում ունեցող «հեռահար ուսուցում» կամ «հեռահար կրթություն» կապակցության գործածումը սխալ է և մերժելի: Հեռահար կարող են լինել կրթական գործընթացին առնչվող մեր նպատակները, բայց ոչ երբեք ուսուցումը կամ կրթությունը:

Հեռավար ուսուցման գործընթացը

Հեռավար ուսուցումը եռաճյուղ գործընթաց է, որը ներառում է սովորող-սովորող, սովորող-ուսուցիչ կամ դասախոս-սովորող-բովանդակություն հարաբերությունները: Հեռավար ուսուցումը մտավոր, ուսուցչական ու սոցիալական ներկայության մասին է⁴⁰⁸:

Հեռավար ուսուցման հիմնական սկզբունքը մանկավարժի ու սովորողի միջև ինտերակտիվ հաղորդակցության ստեղծումն է առանց անմիջական շփման և որոշակի տեղեկատվության ու հմտությունների ինքնուրույն զարգացումը ընտրված դասընթացի և դրա ծրագրի՝ տվյալ տեղեկատվական տեխնոլոգիայի միջոցով⁴⁰⁹:

Հեռավար ուսուցումը համադրում է տեխնոլոգիական, մանկավարժական-կրթական գործոնները: Սոցիալ-տնտեսական պայմանները նույնպես կարևոր են: Հայաստանում արագորեն կազմակերպվեց հեռավար կրթությունը՝ առաջ բերելով որոշակի խնդիրներ: Համակարգչային սարքավորումներ և համացանց չունեցող երեխաները դուրս մնացին ուսումնական գործընթացից: ՀՀ ԿԳՄՍ Նախարարության Նախաձեռնությամբ հավաքագրվեցին համակարգիչներ, կազմակերպվեցին դասերի հեռարձակումներ հանրային ու մարզային հեռուստաալիքներով, հեռահաղորդակցության օպերատորները տրամադրեցին անվճար հասանելիություն առցանց դասերի համար:

Հեռավար ուսուցումը, ի տարբերություն ավանդականի, առաջ է բերում հոգեբանամանկավարժական մի շարք խնդիրներ, որոնք ստիպված են լուծել մանկավարժներն ու սովորողները.

- դժվարություններ՝ պայմանավորված ուսուցման գործընթացի մասնակիցների ոչ անմիջական շփմամբ,
- խնդիրներ՝ կապված արդյունավետ աշխատող փոքր ուսումնական խմբերի ձևավորման հետ՝ համագործակցային ուսուցում իրականացնելու համար,
- խնդիրներ՝ պայմանավորված սովորողների կողմից տեղեկատվության ընկալման անհատական առանձնահատկություններով,
- մանկավարժի համապատասխանությունը հեռավար ուսուցման համար ընտրված մեթոդիկային և մանկավարժական տեխնոլոգիաներին:

⁴⁰⁸ Տե՛ս **Simonson M.**, Distance learning, <https://www.britannica.com/topic/distance-learning> (12.07.2020):

⁴⁰⁹ Տե՛ս **Водолад С. Н., Зайковская М. П., Ковалева Т. В., Савельева Г. В.** Дистанционное обучение в вузе, Ученые записки. Электронный научный журнал Курского государственного университета, 2010, Т. 13, №1, <https://cyberleninka.ru/article/n/distantsionnoe-obucheniye-v-vuze/viewer> (11.05.2020), **Кузнецова О.** Дистанционное обучение: за и против // Международный журнал прикладных и фундаментальных исследований, 2015, №8–2, С. 362–364.

Հեռավար ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի ու մանկավարժի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների ու հեռահաղորդակցության միջոցներով: Հեռավար ուսուցման նպատակը կրթական հաստատությունների սովորողներին ուսումնական ծրագրեր յուրացնելու հնարավորություն ընձեռելն է անմիջապես բնակության կամ ժամանակավոր գտնվելու վայրում⁴¹⁰: Գոյություն ունեցող ուսուցման ձևերը տնտեսական ու կազմակերպչական տեսանկյունից թույլ չեն տալիս գործնականում նման կրթություն ապահովել, հեռավար ուսուցումը, որը հիմնված է տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների լայնածավալ կիրառման վրա, լուծում է նշված խնդիրը: Ի տարբերություն ավանդական ուսուցման, որը ներառում է դասեր կամ դասախոսություններ ու գործնական պարապմունքներ, հեռավոր ուսուցումն ունի նաև էլեկտրոնային շտեմարանների, վեբսեմինարների և ինքնուրույն վարժանքների հնարավորություն: Վերջիններս հնարավորություն են տալիս լրացնելու դպրոցական կամ համալսարանական միջավայրի բացակայությունը:

Հեռավար ուսուցման առավելությունները

Հեռավար ուսուցման կարևոր առավելությունը ուսուցման անընդհատականության, շարունակականության ապահովումն է: Հեռավար ուսուցումը սկզբունքորեն տարբերվում է ավանդականից նրանով, որ ստեղծվում է նոր կրթական տեղեկատվական միջավայր, որտեղ սովորողը հստակորեն գիտակցում է, թե ինչպիսի գիտելիքներ, հմտություններ և ունակություններ են իրեն անհրաժեշտ⁴¹¹:

Հեռավար ուսուցումը բնորոշ են.

- *Ճկունություն*. սովորողները չեն հաճախում դասընթացների, և յուրաքանչյուրը կարող է սովորել այնքան, որքան անձամբ իրեն անհրաժեշտ է՝ դասընթացը յուրացնելու, կարգապահություն հաստատելու և ընտրված մասնագիտության մեջ անհրաժեշտ գիտելիքներ ստանալու համար,
- *Մոդուլայնություն*. հեռավար կրթության ծրագրերի հիմքում մոդուլային սկզբունքն է: Յուրաքանչյուր առարկա կամ մի շարք առարկաներ, որոնք յուրացնում է սովորողը, ստեղծում է ամբողջական պատկերացում որոշակի առարկայի վերաբերյալ: Սա թույլ է տալիս դասընթացների հիման վրա կազմել ուսումնական պլան, որը բավարարում է անհատական կամ խմբային կարիքները,
- *հեռավար գործողություն*. ուսումնական հաստատության հեռավորությունը խոչընդոտ չէ արդյունավետ ուսումնական գործընթացի համար,
- *ուսուցման տեխնոլոգիայի համապատասխանություն*. ուսուցման գործընթացում մանկավարժը, հաշվի առնելով սովորողի առանձնահատկությունները, սովորելու տեմպը, կարող է ընտրել ուսուցման առանձին տեխնոլոգիա՝ իրականացնելով սովորողակենտրոն ուսուցում,
- *տնտեսական արդյունավետություն և ժամանակի խնայում*. սովորողները հնարավորություն ունեն ինքնուրույն ստանալու անհրաժեշտ գիտելիքներ, օգտվելու զարգացած տեղեկատվական ռեսուրսներից: Նրանց հասանելի են կրթական տեղեկատվության բազմաթիվ աղբյուրներ (էլեկտրոնային գրադարաններ, շտեմարաններ), և սովորողները կարող են նաև հաղորդակցվել միմյանց և մանկավարժի հետ՝ հաղորդակցական ցանցերի միջոցով կամ տեղեկատվական տեխնոլոգիայի այլ միջոցների օգտագործմամբ,

⁴¹⁰ Տե՛ս **M. Ketchell**, Online Learning Can Prepare Students for a **Fast-changing** Future – Wherever They Are, <https://theconversation.com/online-learning-can-prepare-students-for-a-fast-changing-future-wherever-they-are-80497> (11.05.2020):

⁴¹¹ Տե՛ս **Кузмина Л.** Преимущества и недостатки дистанционного обучения// Вестник Московского университета МВД России, N1, 2012, С. 8-9:

- *մանկավարժի նոր դեր*, երբ վերջինիս վստահված են այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են՝ ճանաչողական գործընթացը համակարգելը, դասավանդվող դասընթացը հարմարեցնելը, խորհրդատվությունը, կրթական նախագծերի կառավարումը և այլն: Սովորողների հետ փոխհարաբերությունն իրականացվում է հիմնականում ասինխրոն՝ էլփոստի կամ համացանցային կապի համակարգերի միջոցով,
- *տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը*,
- *փոխգործունեությունը*, *համագործակցային աշխատանքը* (հարցերի ու պատասխանների փոխանակում, երկխոսության ընթացքի կառավարում, որոշումների կատարման վերահսկողություն), որը ներառում է առարկաների երկխոսություն միմյանց հետ՝ օգտագործելով սովորողներին հասանելի միջոցներն ու մեթոդները:

Յեռավար ուսուցման գործընթացը նպաստում է սովորողի ինքնադրսևորմանը. վերջինս ձեռք է բերում ինքնակրթության հմտություններ՝ դառնալով ավելի ինքնուրույն ու պատասխանատու: Սովորողը հեռավար ուսուցում անցնելու համար պետք է ունենա բացառիկ ինքնակազմակերպում, կատարի քրտնաջան աշխատանք և ունենա կրթության մեկնարկային որոշակի մակարդակ: Յեռավար ուսուցման գործընթացում նվազեցվում են սովորողների հուզմունքն ու վախը, նյարդայնանալու, քննության կամ ստուգարքի գնահատման սուբյեկտիվ գործոնները և այլն:

Յեռավար ուսուցման թերությունները

Յեռավար ուսուցումն ունի նաև թերություններ: Բացակայում են սովորողի ու դասախոսի միջև անմիջական շփումն ու հաղորդակցումը, դժվար է սովորողի հայացքից, դիմախաղից ու շարժունձևից նույն արդյունավետությամբ ու արագությամբ ընկալել նրա արձագանքը. այս առումով, բնականաբար, առերես շփումն անփոխարինելի է:

Յեռավար ուսուցման հիմնախնդիրներից մեկը գիտելիքների ստուգման ժամանակ սովորողի ինքնությունը պարզելն է: Այդ խնդիրը մասնակիորեն լուծվում է տեսախցիկների օգնությամբ, ինչը, սակայն, լիարժեք լուծում չէ:

Ոչ բոլոր սովորողներն ու մանկավարժներն ունեն անհատական համակարգիչ, ինչպես նաև երբեմն առկա է լինում նաև հեռավար ուսուցման միջոցների կիրառման տեխնիկական պատրաստվածության խնդիր:

Յեռավար ուսուցումը մանկավարժի առաջ որոշակի պահանջներ է դնում ստեղծագործական մթնոլորտ ստեղծելու, հետադարձ կապ ապահովելու, ունկնդիրներին շահադրդելու առումով: Մանկավարժի համար ժամանակատար է հեռավար ուսուցման դասընթացների մշակման գործընթացը:

Տեխնիկական սահմանափակ հնարավորությունների, համացանցի դանդաղության պատճառով ձայնը, պատկերը ու գրաֆիկան հաճախ ուշացումով են տեղ հասնում, թեպետ համապատասխան բարելավման աշխատանքներն իրականացվում են, հաղորդակցման տեխնոլոգիաները հանգեցնում են սովորողների մեկուսացմանը, նվազում է հսկողությունը մանկավարժի կողմից:

Յուրաքանչյուր սովորող պետք է դրսևորի ինքնուրույնություն, կարգապահություն, ցուցաբերի պատասխանատվություն՝ ապահովելու ուսուցման բարձր արդյունավետություն: Յեռավար ուսուցումն ունի ինքնամոտիվացնող հատկություն. նույնիսկ քիչ ցածր առաջադիմություն ունեցող սովորողներն իրենց դրսևորում են ավելի դրական հատկանիշներով:

Հեռավար ուսուցման տեխնոլոգիաներ, մեթոդներ ու միջոցներ

Հեռավար ուսուցման տեխնոլոգիաների տեսակներն են.

1) քեյսային (պորտֆելային) տեխնոլոգիա, երբ սովորողներին ուղարկվում են ուսումնամեթոդական նյութեր,

2) հեռուստատեսային տեխնոլոգիա, որը հիմնված է ուսուցման գործընթացում հեռուստատեսային միջոցների կիրառման վրա,

3) համացանցային տեխնոլոգիա. հիմնված է համացանցի կիրառման վրա՝ սովորողներին ուսումնամեթոդական նյութերով ապահովելու և ուսուցանելու համար և այլն⁴¹².

Հեռավար ուսուցման ժամանակ տեղեկատվությունը սովորողներին ներկայացվում է տպագրված նյութերի, տեսադասերի, տեսադասախոսությունների, էլեկտրոնային նյութերի, հեռուստատեսային հաղորդումների միջոցով և այլն: Նշենք, որ առավել որակյալ ու արդյունավետ ուսուցում ապահովվում է «սովորող-ուսուցիչ/դասախոս» հետադարձ կապի առկայությամբ, ինչը թույլ է տալիս օգտագործել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Ներկայումս ավանդական տեղեկատվական տեխնոլոգիաներից բացի, սկսում են լայնորեն կիրառվել էլեկտրոնային փոստը, համացանցը, տեսադասերն ու տեսադասա-խոսությունները և մուլտիմեդիա միջոցները⁴¹³:

Հեռավար ուսուցման մեթոդներից են.

- *ուսուցման ակտիվ և փոխգործակցության մեթոդը*, որը կիրառելու համար ուսուցիչները ստեղծում կամ ընտրում են կրթական տարբեր ռեսուրսներ՝ տպագիր, աուդիո նյութեր, տեսանյութեր, դասագրքեր, հեռահաղորդակցման ցանցերով փոխանցվող ուսումնական նյութեր: Մեթոդը նախատեսում է հետազոտության և խնդրի ուսուցման մեթոդների լայն կիրառում, որը ենթադրում է նաև փոխադարձ գնահատում: Ուսուցիչ դերը կրճատվում է այնքանով, որ վերջինս առաջադրում է խնդիր և ստեղծում հաղորդակցական բարենպաստ միջավայր, հոգեբանական մթնոլորտ, նաև պատասխանատու է քննարկումների ընթացքը համակարգելու, ղեկավարելու, ինչպես նաև նյութեր նախապատրաստելու, աշխատանքային պլան մշակելու, քննարկվող հարցերի ու թեմաների համար,
- *Նախագծման մեթոդը* ենթադրում է ուսուցման բարդ գործընթաց, որը թույլ է տալիս սովորողին անկախություն ցուցաբերել իր կրթական ու ճանաչողական գործունեության պլանավորման, կազմակերպման ու վերահսկման գործում, ինչի արդյունքը գիտելիքի համալրումն է,
- *խնդիրների ուսուցման մեթոդը* թույլ է տալիս դիտարկել բարդ ճանաչողական առաջադրանքներ, որոնց լուծումը ուշագրավ է գործնական կամ տեսական առումով: Սովորողների ուշադրությունը կենտրոնանում է կարևոր խնդիրների վրա, որոնք խթանում են նրանց ճանաչողական գործունեությունը՝ նպաստելով այդ խնդիրների լուծման հմտությունների ու կարողությունների զարգացմանը,
- *ուսուցման հետապոտական մեթոդը* բնութագրվում է սովորողների համար հստակ նպատակների առկայությամբ, հետազոտական մեթոդների զինանոցի լայն կիրառմամբ, մշակման գիտական մեթոդներով և արդյունքների ներկայացմամբ:

⁴¹² Տե՛ս Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու, ՀՀ կառավարման ակադեմիա և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, Երևան, 2017, էջ 18:

⁴¹³ Տե՛ս **Попова Н. Е., Чикова О. А.** Технологии дистанционного обучения как инновация в процессе реализации образовательных стандартов нового поколения, Вестник Новосибирского государственного педагогического университета, Вестник НГПУ Все права защищены, 2(18), 2014, С. 20-21:

Ավելի բարձր արդյունավետությամբ է աչքի ընկնում հեռավար ուսուցման «խառը մեթոդը», որը ուսուցման համաժամանակյա ու տարժամանակյա մեթոդների զուգակցումն է:

Հեռավար ուսուցման տեխնոլոգիաներին ու մեթոդներին զուգահեռ կարևոր դեր են խաղում դասավանդման միջոցները: Հեռավար ուսուցման տեխնոլոգիայի հիմնական միջոցներից են գրքերը (թղթային ու էլեկտրոնային տարբերակներով), առցանց ուսուցողական նյութերը, համակարգչային ուսուցման համակարգերը պայմանական ու մուլտիմեդիա տարբերակներում, տեսադասերը, տեղեկատվական շտեմարանները, էլեկտրոնային գրադարանները, փորձագիտական ու տեղեկատվական համակարգերի վրա հիմնված դիդակտիկ նյութերը:

Հեռավար ուսուցմամբ ձեռք բերված գիտելիքներն ինքնանպատակ չեն, այլ գործնական հմտությունների ձեռքբերման և ի հայտ եկող խնդիրների լուծման միջոց են: Մանկավարժը զուգակցում է ավանդական ուսուցման մեթոդները (քննադատական մտածողություն, նախագծեր, խաղային ու առողջապահական տեխնոլոգիաներ) հեռավար ուսուցման յուրահատուկ մեթոդների հետ: Ուսուցման ավանդական մոտեցումը նախատեսում է բոլոր սովորողներին մատուցել նույնպիսի և նույնաձևավալ տեղեկություն, սակայն ավելի արդյունավետ են այն մեթոդները, ըստ որոնց՝ յուրաքանչյուր սովորողի տրվում է առանձին հանձնարարություն՝ հաշվի առնելով նրա կարողությունները, կենսափորձը, պահանջները, հետաքրքրությունները և հնարավոր դժվարությունները: Անհատական մոտեցում է ցուցաբերվում սովորողի գիտելիքների ստուգման գործում: Վերջինս տեսնում է իր բոլոր թերացումները:

Եզրակացություն

Հեռավար ուսուցման նշված բոլոր առավելություններն ու թերությունները հաշվի առնելով՝ կորոնավիրուսի դադարի շրջանն անհրաժեշտ է օգտագործել հեռավար կրթության՝ հնարավորինս տարբերակված փորձարկումներ անելու համար: Սա կօգնի ապագայում հեռավար ուսուցման ճիշտ համակարգ մշակելուն: Ներկայումս առկա է հեռավար ուսուցման փորձի պակաս, վերապատրաստման ծրագրերի ու դասընթացների մշակվածության, ուսուցման համապատասխան տեխնոլոգիաների, մեթոդների, միջոցների ընտրության խնդիր և այլն: Հեռավար ուսուցման մեթոդները, ձևերը, միջոցները կարող են հաջողությամբ իրականացվել ուսումնական գործընթացում, եթե դիտարկվեն այն տեխնոլոգիական պայմանները, որոնց դեպքում դրանք արդյունավետ կլինեն:

Հեռավար կրթությունը հնարավորություն է տալիս իրականացնելու ժամանակակից կրթության երկու հիմնական սկզբունք՝ կրթություն բոլորի համար և կրթություն ամբողջ կյանքի ընթացքում: Հեռավար ուսուցման հեռանկարում անհրաժեշտ է հեռավար ու ավանդական ուսուցման համադրում, տեխնոլոգիական կայուն մեխանիզմի առկայություն: Այս առումով մի քանի խորհուրդ ներկայումս հեռավար կրթություն իրականացնող մանկավարժներին.

- դասավանդումը դարձնել աշակերտակենտրոն կամ ուսանողակենտրոն՝ մանրակրկիտ ծրագրելով ու կազմակերպելով սովորողի գործունեությունը,
- ապահովել առավելագույն փոխգործունություն/ ինտերակտիվություն սովորողի ու մանկավարժի միջև,
- ապահովել համագործակցային, խմբային ուսուցման հնարավորություն,
- անպայմանորեն իրականացնել հետադարձ կապ՝ ստեղծելով շահադրման մթնոլորտ,
- ստեղծել մոտիվացիա և պահպանել այն,
- որպես գործիքներ կիրառել էլեկտրոնային դասախոսությունները, սեմինարները, տեսադասերն ու տեսադասախոսությունները, քննարկումները,

- ուսումնառության կարգապահության համար սահմանել սովորողի ներկայության նորմ և համացանցային ուսումնառության ակտիվության պահանջ:

Սա մի ժամանակահատված է՝ վերանայելու ուսումնական հաստատության՝ միայն տեղեկատվություն տալու ու պահանջելու մեխանիզմը և ձևավորելու համակարգված ու որակյալ ուսուցում նաև հեռավար կրթության ոլորտում:

PECULIARITIES OF DISTANCE LEARNING

MERI HOVHANNISYAN

*Yerevan State University, The Centre of Pedagogy and Education Development,
Lecturer, Assistant, Ph.D. in Philology;
Institute for Armenian Studies, Researcher, Scientific Secretary,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the study is to clearly define the often-misidentified concepts of "online" and "distance learning", and to analyze the features of distance learning. Our task is to identify the essence of distance learning, its advantages and disadvantages, pedagogical problems that arise during distance learning, and ways to solve them. The study used both symmetric and special (comparative, logical, etc.) methods.

As a result of the research, we concluded that distance learning is based on distant online learning. Online learning using computer technology differs from distance learning in its completeness. The distance learning schedule and assessment system are clearly developed, including the entire learning process.

In contrast to traditional teaching methods, distance learning includes modern information technologies, contributes to the continuity of learning, and makes it easier to organize training. The disadvantages of distance learning are due to indirect contact between the student and the teacher, lack of technical training for the use of distance learning tools for the student and the teacher, unavailability of computer equipment or the Internet, selection of distance learning methods, etc. Student-centered learning, collaborative learning, choosing the right control tool, online learning requirements, and more can contribute to the effectiveness of distance learning.

Keywords: *distance learning, Correspondence education, online learning, traditional learning, distance learning technology, blended learning, student-centered learning, collaborative learning, feedback.*

ОСОБЕННОСТИ ДИСТАНЦИОННОГО ОБУЧЕНИЯ**МЕРИ ОВАННИСЯН**

*преподаватель Центра педагогики и развития образования
Ереванского государственного университета,
ассистент, кандидат филологических наук
научный сотрудник и ученый секретарь
Института арменоведческих исследований,
г.Ереван, Республика Армения*

Цели исследования – четко определить нередко ошибочно идентифицируемые понятия «онлайн» и «дистанционное обучение» и проанализировать особенности дистанционного обучения. Наша задача – выявить сущность дистанционного обучения, его преимущества и недостатки, педагогические проблемы, возникающие при такой форме обучения, и способы их решения. В ходе исследования использовались как симметричные, так и специальные (сравнительный, логический и др.) методы.

В результате исследования мы пришли к выводу о том, что дистанционное обучение основано на заочном онлайн-обучении. Онлайн-обучение с использованием компьютерных технологий отличается от дистанционного обучения своей объемностью. График дистанционного обучения и система оценивания четко проработаны и охватывают весь учебный процесс.

В отличие от традиционных методов преподавания, дистанционное обучение включает современные информационные технологии, способствует обеспечению непрерывности обучения, удобству его организации. Недостатки дистанционного обучения обусловлены непрямым контактом обучающегося/педагога, отсутствием технической подготовки для применения средств дистанционного обучения обучающегося и педагога, недоступностью компьютерного оборудования или интернета, подбором методов дистанционного обучения и т.д. Эффективности дистанционного обучения могут способствовать обучение, ориентированное на учащегося, совместное обучение, выбор правильного инструмента контроля, требования к онлайн-учебной деятельности и многое другое.

Ключевые слова: *дистанционное обучение, заочное обучение, онлайн обучение, традиционное обучение, технологии дистанционного обучения, смешанный метод обучения, обучение, ориентированное на учащегося, совместное обучение, обратная связь.*